

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.04.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Շողակաթ Առուստամյանի 26.03.2012թ-ի գանգատը «ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 07.03.2012թ. թիվ 2106446 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ա/Ձ Շողակաթ Առուստամյանը ծանուցվել է 11.04.2012թ-ին կայանալիք նիստի ժամի և վայրի վերաբերյալ, սակայն վերջինս գանգատի քննարկմանը չի ներկայացել:

Նշվեց նաև, որ «ԿԱ ՊԵԿ նախագահի ժ/պ 25.04.2012թ. թիվ 11 որոշման համաձայն, սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու «Օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարձգվել է 15 օրով:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 21.02.2012թ. թիվ 2106446 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Շողակաթ Առուստամյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 07.05.2010թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 07.03.2012թ-ին կազմվել է թիվ 2106446 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջարկվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ 1-ին կարգի մասնագետ Սամվել Ենգիբարյանի կողմից 27.02.2012թ. ժամը 12:30-ին ք.Աբովյան, 3-րդ մ/շ 17 շենքի դիմաց հասցեում գտնվող Շողակաթ Առուստամյան Ա/Ձ-ին պատկանող խանութից ՀԴՄ կիրառման ճշտության ստուգման նպատակով կատարվեց հսկիչ գնում շոկոլադե կոնֆետների 1 տուփ 750 դրամ ընդհանուր գումարի, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառողուհի-գանձապահ Շողակաթ Առուստամյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 12:36-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 1010 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 750 դրամը, ժամը 12:36-ին մուտքագրվեց ՀԴՄ: Գնված ապրանքը ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից Շողակաթ Առուստամյան Ա/Ձ-ին առաջարկվեց ետ ընդունել, սակայն Շողակաթ Առուստամյան Ա/Ձ-ն հրաժարվեց ետ ընդունել ապրանքը և տալ գրավոր հայտարարություն, որի համար կազմվեցին համապատասխան արձանագրություններ և ժամը 12:37-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 750 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ Շողակաթ Առուստամյան Ա/Ձ-ի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «Սկիչ դրամակազմի մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջարկվում է տուգանք 150 000 դրամի չափով:

Ա/Ձ Շողակաթ Առուստամյանի գանգատում մասնավորապես նշված է.

Իրականությունն այն է, որ ս/թ-ի փետրվարի 27-ին, ժամը 10:30-ի սահմաններում ստուգում կատարող Սամվել Ենգիբարյանը սկզբից գնել է 630 դրամ արժողությամբ կարամել տեսակի կոնֆետ, որի համար նրան տրամադրվել է ՀԴՄ-ի կտրոն: Նույն պահին նա հրաժարվել է գնված կոնֆետից, այն վերադարձրել է, և փոխարենը ուզել է շոկոլադե կոնֆետների 1 տուփ՝ գումարով 750 դրամ: Նրան տրամադրվել է 750 դրամ արժողությամբ 1 տուփ շոկոլադե կոնֆետը, որի համար նա լրացուցիչ վճարել է 120 դրամ, որի համար նույնպես տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Դրանից հետո ստուգում կատարող պաշտոնատար անձինք ներկայացրել են Կոտայքի ՏՀՏ-ի պետի 21.02.2012թ-ի թիվ 2106446 հանձնարարագիրը ծանոթանալու համար: Սակայն, 27.02.12թ-ին, ժամը 12:30-ի սահմաններում, հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք նորից վերադարձել են Ա/Ձ Շողակաթ Առուստամյանին պատկանող խանութ և խնդրել հետ վերցնել շոկոլադե, որը մերժվել է: Նրանք, այդ ընթացքում Ա/Ձ Շողակաթ Առուստամյանին մոլորության մեջ գցելով մոտեցել են ՀԴՄ-ին և պատճառաբանել, որ շոկոլադի վերադարձը պետք է ցույց տալ ՀԴՄ-ով: Արդյունքում, ինչպես որ նկարագրված է ակտում, նրանց կողմից կատարվել է իրականությանը չհամապատասխանող ստուգում: Այսինքն՝ «Տ աշխատակիցը, ժամը 10:30-ին խանութից գնելով նշված ապրանքը և ստանալով ՀԴՄ-ի

կտրոն, նույն ապրանքը ժամը 12:30-ին վերադարձրել է խանութ և անօրինական ճանապարհով այդ ապրանքի արժեքը նորից մուտքագրել ՀԴՄ, որով էլ իբրև հիմնավորել է տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու համազանցը:

Դիմում-զանգաստի քննության համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ փաստերը, որոնցով ապացուցվում է Կոտայքի ՏՀՏ հարկային ծառայողների անօրինական գործողությունները: Այսպես, թիվ 2106446 հանձնարարագրով ստուգման հարց է առաջադրվել կատարել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, ինչը նշանակում է, որ հարկային ծառայողները պարտավոր էին երրորդ անձի միջոցով պարզել, թե գնված ապրանքի դիմաց տնտեսավարող սուբյեկտը վերցրած գումարը մուտքագրում է ՀԴՄ և հաճախորդին տրամադրում է ՀԴՄ-ի կտրոնը, թե ոչ: Սակայն, ստուգման բուն պրոցեսը չիրականացնելով հարկային ծառայողները միակողմանի կազմել են օրենքին չհամապատասխանող ակտ: Փաստորեն, հարկային ծառայողները չեն իրականացրել թիվ 2106446 հանձնարարագրին համապատասխան ստուգում: Հարկային ծառայողների գործողությունները պետք է դիտվի անօրինական, որի արդյունքում ձեռք բերված բոլոր փաստաթղթերը, մասնավորապես՝ 07.03.2012թ-ի թիվ 2106446 ակտը, պետք է դիտել օրենքի խախտմամբ ձեռք բերված փաստաթղթեր: Հետևապես, դրանք չեն կարող համարվել իրավական ուժ ունեցող փաստաթղթեր, ինչը բխում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներից:

Խախվել են նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները, քանի որ 27.02.2012թ-ին կազմված ակտի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացրել տնտեսավարող սուբյեկտին: Ակտի նախագիծը տնտեսավարող սուբյեկտին է հանձնվել փոստային առաքման միջոցով 15.03.2012թ-ին կազմված ակտի և այլ նյութերի հետ միասին, որով զրկել են հարկ վճարողին իր առարկությունները ներկայացնելու ակտի նախագծի վերաբերյալ: Չնայած, որ 15.03.2012թ-ին ստացված նյութերում առկա է նաև Կոտայքի ՏՀՏ-ի 29.02.2012թ-ի թիվ 809 գրությունը, որով հավաստվում է, թե իբր ակտի նախագիծն այդ օրվա դրությամբ ուղարկված է:

Բացի վերը նշվածից, Կոտայքի ՏՀՏ-ի 07.03.2012թ-ի թիվ 2106446 ակտն ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածով սահմանված կարգի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 7-րդ, 55-րդ, 57-րդ հոդվածների նորմերի խախտմամբ, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված հիմք է ակտն անվավեր ճանաչելու համար:

Ստուգում կատարող անձինք, համաձայն տրված հանձնարարագրի իրավունք չունենին հսկիչ գնում կատարելու: Հսկիչ գնում կատարելու համար պետք է առկա լիներ հարկային տեսչության պետի համապատասխան հանձնարարագիրը: Հետևապես ստուգողները պարտավոր էին երրորդ անձի միջոցով պարզել, թե Ա/Ձ Շողակաթ Առուստամյանին պատկանող խանութում գնման դիմաց վճարված գումարը մուտքագրվում է ՀԴՄ, թե ոչ: Այսինքն՝ հնարավոր խախտումը պետք է բացահայտվեր գնորդի միջոցով, որը չի կատարվել:

Տվյալ դեպքում հսկիչ գնում կատարելու, այսինքն՝ ուսումնասիրության որևէ հանձնարարագիր չի եղել, իսկ պարզապես հսկիչ գնում կատարելու վերաբերյալ Կոտայքի ՏՀՏ աշխատակիցների մեկնաբանություններն ընդունելու դեպքում կատարվի, որ օրենսդիրն իզուր է ընդունել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածը, որով սահմանվել է հսկիչ գնումների անցկացման կարգը:

Ելնելով վերոգրյալից Կոտայքի ՏՀՏ-ի 07.03.2012թ-ի թիվ 2106446 ակտը ենթակա է անվավեր ճանաչման:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում 1-ին կարգի մասնագետ Սամվել Ենգիբարյանը, որի կողմից կատարվել է ստուգման ակտում հիշատակված գնումը, նշեց, որ Ա/Ձ Շողակաթ Առուստամյանի գանգատում բերված պնդումները չեն համապատասխանում իրականությանը: Նախ նշվեց, որ ակտում հիշատակված ապրանքը գնվել է, ոչ թե ժամը 10:30-ի սահմաններում, այլ ժամը 12:30-ին, ինչի մասին են վկայում ստուգման ընթացքում ՀԴՄ-ից դուրս բերված ֆիսկալային հաշվետվությունները: Ինչ վերաբերում է գանգատում նշված այն պնդմանը, թե նախ գնվել է կարամել տեսակի կոնֆետ՝ գումարով 630 դրամ, որը վերադարձվել է և փոխարենը գնվել է շոկոլադե կոնֆետների 1 տուփ՝ գումարով 750 դրամ, ապա այն նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ իր կողմից գնվել է միայն շոկոլադե կոնֆետների 1 տուփ:

Գանգատում նշված պնդման վերաբերյալ, թե ստուգման հանձնարարագրով առաջադրված հարցի շրջանակներում հարկային ծառայողները պարտավոր էին երրորդ անձի միջոցով պարզել գնված ապրանքի դիմաց հաճախորդին ՀԴԱ կտրոնի տրամադրման հանգամանքը, նշվեց, որ այն հիմնավոր չէ, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, որը համապարփակ ձևով կարգավորում է ստուգման գործընթացը, նման բան չի նախատեսում:

Հսկիչ գնում կատարելու վերաբերյալ գանգատում բերված պնդումների կապակցությամբ նշվեց, որ դրանք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին: Այսպես, հսկիչ գնում կատարելու՝ հարկային մարմնի պաշտոնատար անձանց լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանված են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև նույն օրենքի 2-րդ հավելվածով: Համաձայն հիշատակված իրավական նորմերի՝ հսկիչ գնումը կատարվում է ուսումնասիրության հանձնարարագրի հիման վրա: Քննարկվող դեպքում համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 21.02.2012թ. թիվ 2106446 հանձնարարագրի, կատարվել է հսկիչ-դրամակալային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի ընթացքում պահպանվել են ստուգմանն առնչվող ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները:

Գանգատում բերված պնդումն, որ տվյալ դեպքում պետք է կիրառվեն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջները նույնպես հիմնավոր չէ: Մասնավորապես, նախ պետք է նշել, որ ստուգումը կատարվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և հետո՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ «Հսկիչ դրամակալային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով առաջադրված տուգանքը չի հանդիսանում հարկային պարտավորություն:

Ինչ վերաբերում է գանգատում նշված այն պնդմանը, թե 27.02.2012թ-ին կազմված ակտի նախագիծն օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել տնտեսավարող սուբյեկտին, ապա այս կապակցությամբ ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ ակտի նախագիծը 28.02.2012թ-ին ներկայացվել է Ա/Ձ Շողակաթ Առուստամյանին, սակայն վերջինս հրաժարվել է այն ստանալուց և ստորագրելուց, ինչի մասին կազմվել է համապատասխան արձանագրություն: Արդյունքում ակտի նախագիծը Ա/Ձ Շողակաթ Առուստամյանին ուղարկվել է փոստային ծառայության միջոցով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Շողակաթ Առուստամյանի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ դրամակալային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագիծը վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձնակազմի անդամները պարտավորվել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ